



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

18.05.2022թ.

ՈՐՈՇՈՒՄ 374-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ՎԱՆՔԻ ՏԱՓ ԹԱՂԱՄԱՍ ԹԻՎ 12/22 ՀԱՍՑԵՈՒՄ ՍԵՐՈՔ ԲՈԼՈՒՆՑԻ ԿՈՂՄԻՑ 0.00526 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՍ ԿԱՌՈՒՑՎԱԾ 114.6ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 2021 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության «ՀՕ-397-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. «Պետական համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» հ.731-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24 կետի 3) ենթակետով, հիմք ընդունելով «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՆԱԻՐԻ» ՍՊԸ-ի 07/04/2022թ. N Ա-22-34 եզրակացությունը, և ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի բնակիչ Սերոբ Բոլունցի 2022 թվականի փետրվարի 18-ի թիվ 656 դիմումը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի Վանքի տափ թաղամաս թիվ 12/22 հասցեում Սերոբ Բոլունցի կողմից ինքնակամ կառուցված 114.6քմ արտաքին /97.1քմ ներքին/ մակերեսով ավտոտնակը, որի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, որը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասում, ճանաչել օրինական և համարել համայնքի սեփականությունը՝ առանձնացնելով 0.00526հա մակերեսով սպասարկման հողամաս:
2. ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի Վանքի տափ թաղամաս թիվ 12/22 հասցեում 0.00526 հա բնակավայրերի այլ հողեր գործառնական նշանակությունը փոխել բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի:
3. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի կողմից ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:



ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ